



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս առժեհների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ ֆաղաֆացիների պատրերն ու պատականությունն է»:  
(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք, սոցիալ-տնտեսական և մշակութային նշանավոր կենտրոն Դվինի ավերակները գտնվում են Արտաշատի շրջանում, Երևանից մոտ 30 կմ հարավ: Քաղաքի հիմնադրումը կապվում է Արշակունի Խոսրով Բ թագավորի անվան հետ, որը 330-ական թվականներին Հայոց արքունիքը տեղափոխում է Արտաշատից հյուսիս Դվին կոչվող բլրի վրա և ողջ շրջակա տարածքում տնկել է տալիս անտառներ: 428 թ., երբ վերանում է Արշակունիների թագավորությունը, Դվինը գտնում է մարզպանական Հայաստանի վարչաքաղաքական կենտրոնը: Հայաստանը վայելում էր համեմատական ինքնուրույնություն և տեղի էր ունենում քաղաքի արագ զարգացումը, այստեղ են տեղափոխվում նախարարական տների ներկայացուցիչներ, մեծահարուստ առևտրականներ, արհեստավորներ, որոնք կառուցում են պալատական և այլ տիպի շինություններ: Դվինի ղերը երկրի հասարակական կյանքում հատկապես մեծանում է, երբ Վաղարշապատից այնտեղ է

Ընդհանուր տեսարան միջնաբերդի զազարում



VII դարի Կարողիկոսարանի խաբիսիներից մեկը



տեղափոխվում կաթողիկոսարանը (V դ. 70-ական թվականներ): VIII դարի սկզբներից Դվինը արարների կողմից ստեղծված «Արմինիա» վարչական միավորման կենտրոնն էր: IX—XII դդ. քաղաքը Բագրատունիների, իսկ հետագայում կիսանկախ էմիրների ձեռքում էր: XIII դ. սկզբին այն միացվում է Հայաստանում իշխող Զաքարյանների տիրույթներին: XIII դ. 30-ական թվականներին Դվինը գրավում են մոնղոլները և ահավոր ձեռքով ավերում այն: Քաղաքն աստիճանաբար դուրս է գալիս պատմական ասպարեզից և նրա տարածքում XV—XVI դդ. առաջանում են մի քանի գյուղական բնակավայրեր:

Դվինը իր արվարձաններով գրավում էր մոտ 350—400 հա տարածք: Քաղաքի կենտրոնում բարձրացող բլրի վրա տեղադրված էր միջնաբերդը հզոր պաշտպանական պարսպապատերով և 40-ից

ավել կիսակլոր աշտարակներով: Որպես պաշտպանական լրացուցիչ միջոց, միջնաբերդը օղակում էր 30—50 մ լայնությամբ շրով լցվող խորը խրամատը: Միջնաբերդը քաղաքի թագամասերի հետ կապված էր խրամատի վրա զցված կամուրջներով: Բուն քաղաքը նույնպես պաշտպանված էր կավակերտ հզոր և բնդարձակ պարիսպներով:

Քաղաքի նազիտական ուսումնասիրությունն սկսվել է XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին: 1937 թվականից Դվինում աշխատում է մշտական նազիտական արշավախումբ՝ ղեկ. Սմբատ Տեր-Ավետիսյան (1937—1939), Կարո Ղաֆաղարյան (1946—1976), Արամ Քանթարյան (1976—մինչև այժմ): Բացվել է մի մեծ տարածք միջնաբերդում և նրան կից քաղաքի արևմտյան թաղամասում (կենտրոնական թաղամաս):

Միջնաբերդի գաղաթում պահպանվել



են պալատական շինությունների մնացորդներ սկսված Արշակունիների ժամանակներից: Հիշարժան է բաղնիկատիպ մեծ սրահը (IV դ.), երկշարք 4-ական սյուներով, կավակերտ պատերով տարբեր հարկաբաժիններով պալատական շինության մնացորդներ (VIII դ.): Ողջ բլուրը խիտ կառուցապատված է, աչքի են ընկնում աշխարհիկ բնույթի շինություններ՝ բնակելի, արտադրական, կոմունալ կառույցները: Բլրի թեք լանջերը հնարավորություն են ընձեռել տներ կառուցել զարավանդի վրա: Դվինում որպես շինանյութ հիմնականում օգտագործվել են հում և թրծած կավե աղյուսները, իսկ պատերն իրենց հիմքում ունեցել են գետաբարեր: Ենթերի ներքին հարդարանքը եղել է շատ բազմազան և հարուստ (գիպսե փորագիր և ձուլածո քիվեր, որմնանկարներ և այլ ճարտարապետական մանրամասներ): Բլուր մոնումեն-

տալ շինությունները կառուցված են սկզբում բաց գույնի ավազաքարից (IV—V դդ.), ապա բազմերանգ տուֆից (սկզբում VI դարից):

Կենտրոնական բաղամասում բացվել են Դվինի պաշտամունքային հիմնական շինությունները և երկու կաթողիկոսարան:

Նույնպիսի բաղնիկ էկեղեցին կառուցվել է IV դ. վերջերին V դ. սկզբներին, հետագայում վերածվում է Կաթողիկոսաճարի, Հայաստանում նման կառույցների մեծ ամենամեծն է: V դ. 70-ական

թթ. եկեղեցու երեք կողմերից կառուցվում են արտաքին սյունասրահներ: 572 թ. ապստամբության ժամանակ Էկեղեցին ավերվում է պարսիկների կողմից: 608—618 թթ. այն վերակառուցվում է կրելով զգալի կոնստրուկտիվ փոփոխություններ, որի հետևանքով եռանավ բաղնիկը վերածվում է խաչածև հատա-

կագծով ցմբեթավոր սրահի: Կաթողիկոս ունեցել է շատ ճոխ հարդարանք: Ողջ հատակը, ինչպես և պատերը ծածկված են եղել խճանկարով (քար և ապակի), պատերին փորագրվել են արձանադրություններ և զարդարանդակներ, առատադից կախված են եղել շքեղ ջահեր, գույնզգույն ապակե դամպարներով: Տանիքը եղել է կղմինդրածածկ, զարդարուն ճակատներով: Եկեղեցին փուլ է եկել 893 թ. երկրաշարժի ժամանակ, որը պատմիչների վկայությամբ զգալի վնաս է հասցրել քաղաքին, պատճառելով նաև մարդկային մեծ զոհեր:

Կաթողիկեից հյուսիս-արևելք բացվել է VI դ. միանավ բաղնիկ եկեղեցի, որը խիստ ավերվել է երկրաշարժի ժամանակ: Թաղամասում բացվել են երկու հույակապ պալատական շենքեր, որոնք պատկանում են վաղ միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետական կառույցների դասական օրինակներին: Դրանցից մեկը սեղադրված է Կաթողիկեի հարավ-արևմտյան մասում, կառուցվել է V դարի 70-ական թթ.: Պալատի կենտրոնական առանցքը երեք զույգ մեծ խորիխներով սյունազարդ դահլիճն է, որը բլուր կողմերից շրջապատված է բնակելի, արտադրական և պաշտամունքային սենյակներով: Այն համարվում է Դվինի Կաթողիկոսարանի նախնական շինությունը, որը VI դարի 60-ական թթ. խլվում է կաթողիկոսից և վերածվում պարսից պաշտոնյայի նստավայրի: Այդ ժամանակ էլ պալատի արևմտյան թևում կառուցվում է կրակապաշտական ատորույան: 572 թ. ապստամբները պալատը հրդեհում են և քանդում:

VII դ. առաջին երկու տասնամյակներում կառուցվում է երկրորդ կաթողիկոսարանը եկեղեցու հյուսիսային մասում: Վերջինս նույնպես ունի կենտրոնական սյունազարդ սրահ 4 զույգ սյուներով, որոնք ավարտվել են ծածկը կրող արմավենազարդ շքեղ խոյակներով:



Խոյակ (V—VII դդ.)

Ուշ շրջանի կառույցների մնացորդներ միջնաբերդում (XIII դ.)



Շատ հետաքրքիր շինություն հայտնաբերվեց քաղաքի արևմտյան թաղամասերից մեկում: Այստեղ բացվել են 36 սյուներով մի ահռելի կառույցի մնացորդներ, որը հավանաբար եղել է Դվինի քարավանատներից մեկը:

Դվինը Հայաստանի, Անդրկովկասի, Մերձավոր Արևելքի առևտրա-արհեստավորական խաչոր կենտրոններից էր: Այն աչքի էր ընկնում իր բազմազան արտադրանքով, որի մի մասը արտահանվում էր տարբեր սպառման շուկաներ: Քաղաքի տարածքից գտնվել են աստանյան, բյուզանդական, արաբական, սելջուկյան, վրացական ոսկե, արծաթե և պղնձե մեծաբանակ դրամներ, որոնք Դվինի լայնածավալ առևտրական կապերի խոստուն վկաներն են: Արաբական շրջ-





Հիւն և վաղ միջնադարյան շինությունների հետքեր

շանում Գլխնում հատված զրամների գանձերի ձևով գտնվել են Մերձբալթիկայում, Սկանդինավյան երկրներում և այլուր: Հայ և արաբ պատմիչները գովեստով են խոսում Գլխնում արտադրված կերպասեղենի, գորգերի, բարձերի, ժանյակների և արհեստային արտադրանքի այլ տեսակների մասին:

Խեցեղործ վարպետները պատրաստել են տարբեր կիրառության անոթներ՝ սկզբնապես հասարակ անոթներից, վերջացրած զինու մեծ կարասներով: Վարպետները կիրտել են շնարակած խեցեղենի և հախճապակու հիանալի անոթներ, որոնք դեկորատիվ և կիրառական արվեստի անկրկնելի նմուշներ են:

Գլխի ապակու ժողովածուն իր որակով և անոթների բազմազանությամբ Մերձավոր արևելքում կարելի է համարել լավագույններից մեկը: Օգտագործելով նույն եկող լավագույն ավանդությունները, հայ ապակեգործներն ավելի բարձր մակարդակի հասցրին հայկական ապակեգործությունը: Պեղումների ժամանակ

գտնվել են ոսկերիչների և արծաթագործների պատրաստած հիանալի զարդեր: Դարբինները պատրաստել են աշխատանքային գործիքներ, զինագործները՝ նետասլաքներ, նիզակներ, դաշույններ, դռնակներ: Գլխնում բարձր մակարդակի վրա է եղել քարի և ոսկրի մշակումը:


Քաղաքը առևտրական կապերի մեջ է եղել տարբեր երկրների հետ: Պեղումների ժամանակ գտնված իրերի մի մասը ծագում է բյուզանդական, եգիպտական, ասորական, պարսկական կենտրոններից: Աչքի են ընկնում Պարսկաստանի Ռեյ և Քաշան քաղաքներից ներմուծված շոգյուն հախճապակին, Ասորիքի Ռաքթա քաղաքից բերված ապակեղենը, բյուզանդական մոզալիկ ապակին և այլ նմուշներ:

Գլխը բազմաշերտ հուշարձան է: Այստեղ բնակավայր է գոյություն ունեցել սկսած մ. թ. ա. III հազարամյակից: Մ. թ. ա. I հազարամյակի սկզբներին Գլխի բլրի վրա և մոտակա տարածքում

եղել է խոշոր բնակավայր, որը հայտնի է իր պաշտամունքային կառույցներով, խեցեղենով և այլ բարձրարժեք ու նյութերով: Մ. թ. ա. II—մ. թ. I դարերում նույն տարածքում հիմնվել է հելլենիստական բնակավայր, որը Արտաշատը շրջապատող ավաններից մեկն է եղել և կարևոր դեր կատարել մայրաքաղաքի պաշտպանական համակարգում:



Հախճապակե սկանակ (XI—XIII դդ.)



Ապակե գավաթ (XI—XIII դդ.)



Քարե բեալոբ խաչ (VI դ.)



Կավե կենդանակերպ աճոր (IX—XI դդ.)



Գլինը միջնադարում, իր հազարամյա զոյուժյան ընթացքում բազմիցս ավերվել է և նորից կառուցվել, ապրել է տարբերային երկու մեծ աղետ (863 և 893 թթ. երկրաշարժերը): Նման պայմաններում առաջացել է մշակութային մի հզոր շերտ 7—8 մ հաստությամբ, որն իր մեջ է ամփոփել տարբեր դարաշրջանների ճարտարապետական կառույցները, նյութական մշակույթի մասունքները: Երբեմնի ծաղկուն բաղաբը, որը ներկայումս ավերակների կույտ է, բացում է իր գաղտնիքները և շատ բան է տալիս միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային պատմության ուսումնասիրության համար:

Քալանքարյան Արամ Աշտի Դիլե



Մասն. խմբագիր՝ Բ. Ն. Առաքելյան  
 Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան  
 Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան  
 Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասոյան  
 Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:  
 Ստորագրված է տպագրության  
 14.07.1987 թ.: Ֆորմատ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>:  
 Քուղթ՝ «Կավեապատ», տպագր. 0,42  
 պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր  
 779: Տպաբանակ 10000: Գինը 15 կոպ.:  
 ՀՍՍՀ հրատարակչությունների, պուլտրա-  
 ֆիայի և գրքի ակտորի գործերի պետա-  
 կան կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,  
 Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26:

Ջերակած աճոր (XII—XIII դդ.)